

## ԻՄ ՀԱՇԻՎԸ ՀՐԱՏ<ԱՐԱԿՉԱԿԱՆ> ԸՆԿ<ԵՐՈՒԹՅԱՆ> ՀԵՏ

Շատերը տեսած կլինին, թե ինչպես են վիճում ռամիկները: Վիճում են, օրինակ, իրանց քոխվի կառավարության մասին. մեկն ասում է լավ է կառավարում, մյուսն ասում է՝ վատ: Վեճը տաքանում է, և հանկարծ տեսնում ես մեկը մյուսի դեմ գոռաց. «Տո՛, դո՛ւ ես քոխվի վրա խոսում. դու էն չե՛ս, որ Մադոնց Ղուկասին 20 մանեթ ես պարտ», և եթե մի քիչ էլ ամոթից հեռու մարդ է, մի սուտ էլ ավելացնում է, թե «պարտ ես ու ատկազ ես անում»:

Իհարկե, քոխվի հարցում այս պարտքն իսկի գործ չունի, բայց նա հիշում է և մի սուտ էլ ավելացնում, թե ատկազ ես անում: Այս խուժանի լոգիկան և հատկությունն է:

Այժմ գյուղից եկեք Թիֆլիսի նման մի քաղաք, և միևնույն երևույթը ցույց տալու համար ես ձեզ տանեմ ոչ թե Շեյթան-բազար, այլ «Մշակի» խմբագրատունը:

Ես Հրատարակչական ընկերությանը փող եմ պարտ: Դրա մի մասը վճարել եմ, մնացածի համար ստորագրություն եմ տվել (93 թ. դեկտ.). ստորագրություն տալուց հետո էլ կրկին վճարել եմ (94 թ. դեկտ. տալոն N° 87), սրանից հետո էլ անցյալ տարի ընկ<երության> վարչությունից պատվեր եմ ընդունել թարգմանություն անելու (տե՛ս տեղեկագիր, 1896 թ. երես 32): Այս բոլորովին ջոկ և մասնավոր մի գործ է:

Այժմ, այս տարվա մարտ ի 22-ին կայանում է Հրատարակչական> ընկ<երության> ընդհանուր ժողովը: Ես ժողովում բողոքում եմ տեղեկագրի ինչ-ինչ կետերի դեմ, թե խմբ<ագրական> մասնաժողովը չափազանց շատ թարգմանության պատվերներ է տվել, այդպիսով մտել է իր հաջորդ մասնաժողովների գործունեության շրջանը, և սրա նման բաներ, որ ոչ մի կապ չունին իմ պարտքի հետ: Այդ ժողովում հանկարծ դրին ու քննեցին պ. Շիրվանզադեի գործը: Ես բողոքեցի, թե չի կարելի այդ ձևով դատաստան կտրել և մինչև անգամ այդ վարմունքը հրապարակավ անվանեցի խուժանական (տե՛ս Տարագ N° N° 12 և 14): Սակայն այս էլ ոչ մի առնչություն չունի իմ պարտքի հետ և ընթերցողը պարզ տեսնում է, թե ընչի մեջ է կայանում իմ **դժգոհությունը**:

Այս բոլորից հետո «Մշակի» խմբագրությունը հանդիսանում է Հրատարակչական ընկերության պաշտպան և հովանավոր և թերթի № 42-ում տպում է «ովքե՞ր են դժգոհները... Հ. Թումանյան... Թումանյան ահա չորս տարի է ընկերությանը մոտ 60 ո. է պարտ» և մի սուտ էլ ավելացնում է «և չէ տալի»: Դեհ, ասացեք խնդրեմ, մի՞թե խուժանական չի այս էլ, և մի՞թե մի որևէ բանով այս խմբագրությունը տարբերվում է այն գռեհկից, որ օրինակ բերի խոսքիս սկզբում:

Բայց ես այն չեմ հարցնում, թե ի՞նչ տեսակ վարմունք ու երևույթ է սա, ես այն եմ հարցնում, թե ընթերցողն ի՞նչ է կարծում, ես ո՞ւմ դիմեմ, ո՞ւմից բացատրություն ու բավականություն պահանջեմ, երբ իմ պարտքը երևում է լրագրում և զրպարտությունն էլ հետը: Այո՛, կարող էի դիմել և՛ «Մշակի» խմբագրությանը, և՛ դատարանի, և՛ միջնորդ դատարանի, և՛ մամուլին, և՛ հասարակությանը, բայց ի՞նչ եք կարծում, կարող էի իմ պարտքատերին էլ դիմել, բան հարցնել, թե ոչ: Չգիտեմ ընթերցողն ինչպես է կարծում, բայց ես մտածել եմ, թե առաջ դիմեմ իմ պարտքատերին, մի հարցնեմ, թե այդ ինչպես է եղել, որ իմ պարտքը, այն պարտքը, որ իսկի քո տարեկան հաշիվներում (տեղեկագիրներում) էլ չի դուրս գալիս, այն ստորագրությունը, որ տվել եմ քեզ և քո զրպանումն է (զանձարանում), այսօր դուրս է եկել հրապարակ. և վերջապես ինձ զրպարտել են, թե ես չեմ տալիս, այս մասին դու ի՞նչ կասես: Այսպես մտածելով ընկերության՝ վարչությանը ապրիլի 10-ին գրում եմ հետևյալ նամակը. «Մշակ» լրագրի այսօրվա համարում տպված է, թե ես ընկերությանը մոտ 60 ո. եմ պարտ և չեմ տալիս: Որովհետև այս լուրը արատավորում է իմ պատիվը, ուստի խնդրում եմ հարգելի վարչությանդ ինձ հայտնել, թե ինչո՞ւ և ի՞նչպես է եղել, որ այն պարտքը, որ ես պարտ եմ ընկերությանը, այսօր դուրս է եկել հրապարակ այն թերթում, որի խմբագիրը վարչության պ. նախագահն է և այն էլ այսպիսի զրպարտությամբ հանդերձ, թե ես չեմ տալիս: Ես կարծում եմ վարչությունը այդ կարծիքին լինել չի կարող, թե ես խույս եմ տալիս իմ պարտքից, քանի որ այդ պարտքի մի մասը վճարել եմ ես, մնացածի համար

ստորագրություն եմ տվել<sup>1</sup>, իսկ անցյալ տարվանից վարչության թղթով պատվեր եմ ընդունել թարգմանելու Բելինսկու գրվածքը Լերմոնտովի մասին, և այն ի հաշիվ հիշյալ պարտքի, ինչպես խոսեցել եմ հատկապես վարչության պ. նախագահի հետ: Այս մասին խնդրում եմ վարչության կարծիքը»:

Վարչությունը ինձ պատասխանում է.

**«Ձեր առաջարկած հարցերը չեն վերաբերում վարչության, այլ «Մշակի» խմբագրությանը, որին և կարող եք դիմել»:**

Կարճ և ազդու: Բայց հասկացողի համար շատ երկար է այս կարճ պատասխանի միտքը և սովոր ականջը կճանաչի այս ձայնը, որ պատասխանում է Հրատ <արակչական> ընկերության անունով: Սակայն մի կողմ թողնելով հետին միտքը, հենց արտաքուստ նայելով, դուք տեսնում եք, թե ինչ տեսակ պատասխան է սա: Եվ ահա ես վարչության հետևյալ նիստին ներկայացնում եմ դրա պատասխանը:

«Վարչությունը իր № 150 գրության մեջ ինձ տված պատասխանով ակնհայտնի դաշնակից է հանդիսանում «Մշակ» լրագրին: Նա ոչ միայն իրան պատասխանատու չի համարում, երբ իմ մուրհակը իր գանձարանից դուրս է եկել հրապարակ, այլև չի կամենում պատասխանել գոնե իմ այն հարցին, թե ես խույս եմ տվել իմ պարտքից, թե չէ: Նա այսպիսով ինձ դրկում է իր միջոցով ճշմարտությունից օգտվելու և գրպարտությունը հերքելու հնարավորությունից, համաձայնում է կատարված իրողության հետ և բացարձակ խրախուսում է մի տմարդի վարմունք, ուր բոլորովին ուրիշ առարկայի և վեճի ժամանակ՝ անտեղի և ապօրինի կերպով լրագրում իմ երեսովն են տալիս այն պարտքը, որ ես պարտ եմ ընկերությանը, և որը մինչև անգամ նրա տեղեկագիրներում էլ չի դուրս եկել: Այդ բավական չի, դրա վրա ավելանում է գրպարտությունը, թե ես չեմ տալիս իմ պարտքը: Ես դիմում եմ վարչությանը, խնդրում եմ նրա խոսքն այս մասին, իսկ նա ինձ ուղարկում է... «Մշակի» խմբագրատունը»:

---

<sup>1</sup> Հետո օրդերից երևաց, որ ստորագրություն տալուց հետո էլ եմ վճարել:

Այնուհետև ինձ համար մնում էր ցավելով որոշել և կտրել իմ հարաբերությունը Հայոց հրատարակչական ընկերության հետ, որ այդպես է ճանաչում իր հետ գործ ունեցողի իրավունքը և այդքան անփույթ է գտնվում դեպի գրողի դատն ու պատիվը, որ հայտնի կոխկրտում են նույնիսկ ընկերության անդամները, ընկերության դատի անունով, ընկերության գանձարանի թղթերը հրապարակ հանելով, խեղաթյուրելով և զրպարտելով:

Ահա նամակիս հետ ներկայացնում եմ իմ պարտքի մնացածը՝ 53 ռ. 52 կոպեկ, և սրանով վերջանում են իմ հաշիվները Հրատարակչական ընկերության հետ: Վերադարձնում եմ նույնպես, վարչությանդ № 900 թուղթը, որ գրել է անցյալ տարի և որով ինձ առաջարկել է թարգմանել Բելինսկու գրվածքը Լերմոնտովի մասին: Ես միայն զգացմունքներով կարող եմ կապված լինել ընկերության հետ և ոչ թե թարգմանության պատվերներով, իսկ երբ զգացմունքները վերացած են մեջտեղից, մեր մեջ չի կարող լինել որևէ հարաբերություն: